
**ՀՀ ԳԱԱ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԳՅՈՒՐՁՅԱՆ Ա. Ս.

ՀՀ կառավարության որոշմամբ 2007 թ. հուլիսին հանրապետության պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) կարգավիճակ ունեցող չորս տնտեսագիտական հետազոտական ինստիտուտներ միավորվեցին ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի հիմքի վրա:

Գիտահետազոտական տարբեր ուղղվածություններ ունեցող կազմակերպությունների՝ իր էությամբ համարյա զուտ մեխանիկական այս միավորումը պահանջում էր դրանց իրավահաջորդ հանդիսացող միացյալ ՊՈԱԿ-ի՝ ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի (այսուհետև՝ ինստիտուտ) առաքելության (նպատակայնության), գիտահետազոտական ուղղվածության, գործառույթների կազմի, կազմակերպական կառուցվածքի և գործունեությանն առնչվող այլ հարցերի պարզորոշում: Ցավոք, դա բավարար ընդգրկումով և խորությամբ չհաջողվեց իրականացնել մինչև միավորումը, որ արդյունքները ներառվեին կառավարության համապատասխան որոշման մեջ: Գիտակցելով այդպիսի աշխատանքի կարևորությունը՝ որպես նորաստեղծ ինստիտուտի գործունեության բարձր արդյունավետություն ապահովելու գործոն և միջոց՝ այն ամենայն մանրամասնությամբ և համապատասխան հիմնավորումներով պետք է իրականացվի այժմ և դառնա ինստիտուտի գործունեության ուղեցույց հետագա զգալի ժամանակահատվածի համար: Դրանում, ինչ խոսք, անհրաժեշտաբար հաշվի են առնվելու նաև համաշխարհային զարգացման օրինաչափությունները, հանրապետությունում գիտելիքի հասարակություն և գիտելիքահենք տնտեսություն ձևավորելու գաղափարի իրագործման հրամայականը, ՀՀ ազգային և իրավիճակային առանձնահատկությունները, համաշխարհային հանրությունում իր դերակատարումն ունենալու, իր արածին և հնարավորություններին համապատասխան ճանաչում ստանալու և դիրք գրավելու արդարացի ցանկությունը: Ինստիտուտի գործունեության ռազմավարության որոշակիացման այդպիսի ծրագրային փաստաթուղթ մշակելիս օգտակար կարող են լինել նաև այդ խնդրին առնչվող ստորև ներկայացվող մի շարք դատողություններ:

Ինստիտուտի առաքելությունը. Մարդկության գլոբալ նպատակը մարդու և մարդկային հասարակության գոյատևումն ու զարգացումն է: Դրանց իրագործման ուղին և միջոցը կենսամիջավայրի նպատակահարմար պայմանների պահպանումը և մարդու կողմից գիտակցված նպատակային գործունեության իրականացումն են: Ուստի մարդկային յուրաքանչյուր գործունեություն նպատակաուղղված պետք է լինի այդ նպատակների իրագործմանը:

Բնության կողմից մարդուն շնորհված մտածելու ընդունակությունը և գիտակցված գործելու կարողությունը այդ գործողություններին առաջա-

դրում են նպատակային լինելու և նպատակադրված արդյունքներին արդյունավետ ճանապարհով հասնելու պահանջ-պայմաններ: Մյուս կողմից, հիմնավորված նպատակադրումներ կատարելու և դրանք արդյունավետորեն իրագործելու կարևորագույն պայմանը գործունեության բարձրորակ կառավարումն է, ինչը պահանջում է բարձրորակ կադրեր, տվյալ գործունեության վերաբերյալ խոր գիտելիք, դրա նպատակային կիրառության կարողություն և հմտություն:

Այս պահանջներն ավելի բարձր և բարդ են դառնում կառավարվող օբյեկտի խոշորացմանը և գործառույթների շրջանակի ընդլայնմանը համապատասխան և իրենց առավելագույնին են հասնում համերկրային (մակրոտնտեսական) կառավարման դեպքում: Անհրաժեշտ է դառնում կառավարման մարմնի և կառավարման գործառույթների կատարման գիտատեխնոլոգիական ապահովումը: Եվ քանի որ գործունեությունը, որպես կանոն, բազմակողմ է, դրա յուրաքանչյուր կողմի կառավարման համար կպահանջվի մասնագիտական ապահովում: Դրանց կազմում ավելի ընդգրկուն և ընդհանրական է տնտեսական տեսանկյունը, որին համապատասխան՝ կարևորվում են նաև կառավարման տնտեսագիտական կողմը, ընդունվող կառավարչական որոշումների տնտեսական բարձր հիմնավորվածության, հետևաբար և կառավարման բարձրորակ տնտեսագիտական ապահովման պահանջը:

Նկատի ունենալով, որ ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտը հանրապետությունում միակ խոշոր և բարձրորակ կադրերով համալրված պետական տնտեսագիտական կազմակերպությունն է, կարծում ենք, դրա առաքելությունը և գործունեության հիմնական նպատակը պետք է լինեն ՀՀ մակրոտնտեսական ոլորտային և տարածաշրջանային կառավարման համակարգի այդպիսի ապահովման կազմակերպումն ու իրականացումը: Առավել ևս, որ համաձայն ՀՀ Սահմանադրության՝ ՀՀ ԳԱԱ-ն համարվում է ՀՀ կառավարության խորհրդատուն, ինչը առավել չափով վերաբերում է հենց երկրի սոցիալ-տնտեսական զարգացման խընդիրների լուծման ոլորտին: Ինստիտուտի գործունեության այսպիսի ուղղվածությունն ու պարտավորությունները պետք է ամրագրվեն օրենսդրորեն, որը մեծապես կբարձրացնի ինստիտուտի պատասխանատվությունն իր առաքելությունը բարձր որակով և լայն ընդգրկումով իրականացնելու գործում:

Այս առումով նշենք նաև, որ միավորված ինստիտուտի կողմից այս առաքելության իրագործումը սպասարկող կառավարման մարմինների ոչ փոքր թվի և դրանց կողմից կառավարվող ոլորտների առանձնահատկությունների առկայության պայմաններում զգալի դժվարությունների կարող է հանդիպել, որը, բնականաբար, բացասաբար կանդրադառնա կատարվող աշխատանքների որակի վրա: Նպատակահարմար է նաև ինստիտուտի կարգավիճակի փոփոխումը՝ այն վերածելով տնտեսագիտական հետազոտությունների կենտրոնի: Դա թույլ կտա ընդլայնելու հետազոտությունների դաշտը, համապատասխան չափով մեծացնելու կազմակերպության մասշտաբները, անձնակազմը համալրելու բարձր որակավորման գիտական կադրերով, ինչպես և ընդլայնելու հանրապետությունում տնտեսագիտության բնագավառում նորարարության և

գիտա-

գործնական ստեղծագործ աշխատանք կատարելու բարձր կարողություն ունեցող մասնագետ կադրերի պատրաստման դաշտը:

Ինստիտուտի գործառույթները. Ինստիտուտի գործունեությունը, հետևաբար և հիմնական գործառույթների կազմը բխելու են ՀՀ պետական կառավարման տնտեսագիտական ապահովումն իրականացնելու իր առաքելությունից: Այն առաջին հերթին ներառելու է հետևյալ ընդհանրական գործառույթների կատարումը.

1. ՀՀ պետական կառավարման մարմինների գործառույթների կատարման համար տնտեսական խնդիրների լուծման մեթոդական մոտեցումների ընտրություն, դիտարկվող խնդիրների էությանն ու առկա պայմաններին հարմարեցում, նոր մոտեցումների մշակման և կիրառման խորհրդատվության աշխատանքների կատարում՝ ըստ այդ մարմինների պահանջի, պայմանագրային հանձնարարությունների, իսկ որոշ դեպքերում նաև՝ սեփական նախաձեռնությամբ այդ մարմինների հետ փոխադարձ համաձայնությունների հիման վրա.

2. սոցիալ-տնտեսական զարգացման և բարեփոխումների վերաբե-
րյալ առաջարկությունների մշակում, իրականացման ընթացքի և ստացված արդյունքների վերլուծության ու գնահատման գործընթացներին մասնակցություն.

3. ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման համերկրային, տարածաշրջանային, ոլորտային, պրոբլեմային, գիտատեխնիկական և այլ խնդիրների շուրջ հեռանկարային կամ ռազմավարական ծրագրերի մշակման առաջարկությունների ներկայացում, դրանց մշակմանը մասնակցություն.

4. կառավարման մարմինների կամ այլ կազմակերպությունների մշակած ծրագրերի փորձաքննություն, բարելավման առաջարկությունների ներկայացում.

5. միջազգային, ինչպես և արտերկրի գիտական կազմակերպությունների հետ կամ դրանց պատվերներով հանրապետության համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների լուծում կամ ծրագրերի մշակում.

6. ՀՀ տնտեսությունում առկա հիմնախնդիրների բացահայտում. լուծման առաջնահերթությունների գնահատում և տեսական հիմքերի հետազոտություն, ծրագրային մշակման հիմնավորում, համապատասխան կառավարման մարմիններին առաջարկությունների ներկայացում.

7. այլ երկրների գիտական կազմակերպությունների նորագույն հետազոտությունների արդյունքներին և առաջավոր փորձին ծանոթացում, ՀՀ պայմաններում ներդնելու հնարավորության և արդյունավետության գնահատում, կիրառման միջոցառումների մշակում.

8. տնտեսագիտության բնագավառի հիմնարար տեսական հետազոտությունների իրականացում և արդյունքների հնարավոր կիրառման առաջարկությունների ներկայացում կառավարման համապատասխան մարմիններին.

9. տեսական և գիտագործնական հետազոտություններ իրականացնելու և կառավարման մարմինների հանձնարարությունները կատարելու համար անհրաժեշտ գիտամեթոդական և իրավիճակային տեղեկատվության հավաքում, համակարգայնացում, շտեմարանացում, օգտագործում.

10. ինստիտուտում կատարվող պլանային հետազոտությունների, նաև այլ կազմակերպությունների պատվերով պայմանագրային հիմունքներով իրականացվող աշխատանքների ընթացքի և արդյունքների հսկողություն, գնահատում, հաշվետվությունների ներկայացում պատվիրատուներին, նախատեսված խորհրդատվական ծառայությունների մատուցում միջոցառումների կիրառմանը:

Բացի թվարկած գիտահետազոտական ու խորհրդատվական գործառույթներից, ինստիտուտն իրականացնելու է իր առաքելությանն առնչվող մի շարք այլ գործառույթներ, որոնց թվում առաջնային կարելի է համարել հետևյալները.

11. բարձրորակ գիտական կադրերի պատրաստում ինստիտուտում գործող ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում՝ ուսուցման միջոցով, ուսուցանվող կադրերի ներգրավումը ինստիտուտում իրականացվող հետազոտություններում՝ իրենց թեմաներին առնչվող խնդիրների լուծմանը մասնակից դարձնելու միջոցով.

12. գիտական կադրերի աստիճանաշնորհում և ատեստավորում ինստիտուտում գործող մասնագիտական խորհրդի, որակավորման հանձնաժողովի, ատենախոսությունների նախնական փորձաքննության մարմնի, ինչպես նաև ինստիտուտի գիտխորհրդի նիստերում հարցերի ու խնդիրների լայն քննարկման միջոցով.

13. ինստիտուտի նախաձեռնությամբ կամ մասնակցությամբ տարբեր գիտաժողովների և սեմինարների կազմակերպում և իրականացում.

14. ինստիտուտի գիտական հետազոտությունների հետաքրքրություն ներկայացնող և նորությամբ արդյունքների հրապարակում՝ մենագրությունների, գիտական հոդվածների ժողովածուների, գիտաժողովների նյութերի կամ այլ ձևերով.

15. պետական պատվերներով կամ պայմանագրային հիմունքներով այլ կազմակերպություններին տարաբնույթ ծառայությունների մատուցում կամ նպատակային հետազոտությունների իրականացում:

Ինստիտուտում իրականացվելիք հետազոտությունների հիմնական ուղղվածությունը. ինստիտուտի գիտագործնական հետազոտությունների ուղղվածությունը հիմնականում որոշվելու է կանոնադրությունով սահմանված առաքելությամբ և գործունեության նպատակայնությամբ, ինչպես նաև գործառույթների ցանկով և բովանդակությամբ: Դրանց կազմում առաջնային և ռազմավարական են համարվելու երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը ծառայող ստորև թվարկված ուղղվածության տնտեսագիտական հետազոտությունները:

1. Կառավարման վերադաս մարմինների հանձնարարությամբ կամ պատվերով թեմատիկ պլան ներառված հետազոտությունների իրականացում, այդ թվում՝ երկրի ոլորտային և տարածաշրջանային մակրոտնտեսական կառավարման խնդիրների դիտարկում, արդյունքների գործնական կիրառման շուրջ առաջարկությունների ներկայացում՝ համապատասխան հիմնավորումներով: Ընդ որում, միջոցառումներ պետք է նախատեսվեն արված առաջարկների համար ինստիտուտի պատասխանատվությունը բարձրացնելու ուղղությամբ:

2. Տնտեսագիտության տեսամեթոդաբանական հարցերին և հանրապետությունում դրանց առանձնահատկություններին վերաբերող որոնողական բնույթի գիտական հետազոտությունների իրականացում ինստիտուտի նախաձեռնությամբ ընտրված թեմաների շուրջ:

3. Ինստիտուտի մասնագիտական ուղղվածությանը համապատասխանող թեմաների շուրջ գիտական հետազոտությունների իրականացում կամ նպատակային ծրագրերի մշակում պայմանագրային հիմունքներով՝ այլ կազմակերպությունների պատվերով:

4. ՀՀ-ում, առավելապես գերակայելի համարվող գործունեության ոլորտներում, առկա հիմնախնդիրների բացահայտում, զարգացման վրա դրանց ազդեցության ուղղության և չափի գնահատում, հետազոտության նպատակահարմարության և առաջնայնության որոշում՝ համապատասխան մեթոդական մոտեցման կիրառմամբ, առկա հիմնախնդիրների բանկի ձևավորման հիմնավորում՝ ըստ գործունեության ոլորտների:

5. Հետազոտության թեմաների ցանկի ձևավորում, առաջնայնությունների հիմնավորում, բանկի ձևավորում և սպասարկում, այդ թվում՝ նաև ասպիրանտական ուսուցման թեմաների ընտրության համար:

6. Հետազոտվող օբյեկտների, երևույթների, հասկացությունների, հիմնախնդիրների, գաղափարների ճանաչում, նկարագրում՝ ստորակարգային համակարգի տեսքով, բնութագրում և այդ հիմքի վրա դրանց տարատեսակում, դասակարգում, տիպաբանությունների ձևավորում, այդ նպատակին ծառայող մեթոդական մոտեցումների մշակում, կիրառում՝ հետազոտության կոնկրետ օբյեկտների նկատմամբ:

7. Հետազոտվող օբյեկտների (դրանց տարաբնույթության հաշվառումով) գնահատման մոտեցումների մշակում և գործնական կիրառման մեթոդական ցուցումների ձևավորում, կիրառմանը խորհրդատվական օգնություն: Առանձնակիորեն պետք է կարևորվեն յուրաքանչյուր դեպքի արդյունավետության գնահատման մեթոդների մշակումն ու գործնական կիրառությունը:

8. Հետազոտությունների իրականացման և արդյունքների կիրառման տարբեր ապահովումների (այդ թվում՝ գիտական, կիրառական, ծրագրային, կադրային-մասնագիտական, խորհրդատվական, տեղեկատվական, կանխատեսումների, կառավարչական մեթոդների և այլն) ձևավորման խնդիրների հետազոտություն և արդյունքների կիրառություն:

9. Կառավարման գիտելիքահենքության բարձրացման, գիտելիքաստեղծ և տեխնոլոգիական առաջընթաց ապահովող գործունեության զարգացման, գիտելիքի հիմնական կրող հանդիսացող մարդկային կապիտալի ձևավորման, օգտագործման և արդյունավետ վերարտադրության, կենսամիջավայրի պահպանման և բարելավման, գիտելիքահենք տնտեսության և քաղաքացիական հասարակության կայացմանն ուղղված հետազոտությունների իրականացում:

10. Թեմաներում, որպես աշխատանքների անհրաժեշտ բաղադրիչներ, պետք է դիտվեն՝ հետազոտվող օբյեկտի (երևույթի և այլնի) պահանջվող մանրամասնությամբ ճանաչումը, փոփոխման օրինաչափությունների բացահայտումը, բազմակողմ կամ նպատակային գնահատումը, կառուցվածքավորումը, կառուցվածքի ստորակարգային և հորիզոնական բաղա-

դրիչների միջև փոխադարձ կապերի և փոխազդեցությունների առկայության բացահայտումը և գնահատումը:

Ինստիտուտի գիտական սեկտորի կառուցվածքի շուրջ. Ինստիտուտի բարձրորակ կառավարումը, այսինքն՝ առաքելության նպատակային իրագործումը, հետազոտության թեմաների ճիշտ ընտրությունն ու հետազոտության գործընթացների նպատակային պլանավորումը, իրականացումը, ակնկալվող արդյունքների ստացման վերահսկումն ու գնահատումը, ընթացիկ խնդիրների արդյունավետ լուծումներ գտնելը, ինչպես նաև շատ այլ գործառնությունների ժամանակին և որակով կատարումը ենթադրում են կառավարման ստորակարգային համակարգի գոյություն: Այն իր հերթին նպատակահարմար է դարձնում ինստիտուտում գործունեության մասնագիտացված բաժինների առանձնացումը՝ որոշակիացնելով յուրաքանչյուր բաժնի գիտական ուղղվածությունը: Նկատի ունենալով ինստիտուտի՝ վերը նշված առաքելությունն ու հետազոտությունների նպատակային ուղղությունները, նպատակահարմար է գիտահետազոտական հետևյալ բաժինների առանձնացումը.

1. գիտելիքի հասարակության և գիտելիքահենք տնտեսության ձևավորման և զարգացման տնտեսագիտական տեսագործական խնդիրների հետազոտության բաժին (ներառելու է նաև տնտեսագիտական հիմնարար հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմության խնդիրները).

2. ՀՀ համերկրային և տարածաշրջանային զարգացման խնդիրների հետազոտության բաժին (ներառելու է նաև բնօգտագործման և բնապահպանության խնդիրները).

3. ՀՀ հանրային կառավարման կազմակերպման, տեխնոլոգիաների կատարելագործման և ապահովումների (ենթակառուցվածքների) զարգացման խնդիրների հետազոտության բաժին (ներառելու է նաև կառավարման ապակենտրոնացման, կանխատեսումների, տեղեկատվական բազաների ստեղծման խնդիրները).

4. ՀՀ արտադրական ոլորտի տնտեսագիտական խնդիրների հետազոտության բաժին (ներառելու է արդյունաբերության, գյուղատնտեսության, տնտեսության, այլ ճյուղերի, բնության տնտեսական օգտագործման, ծառայությունների ոլորտի տնտեսագիտական խնդիրները).

5. ՀՀ ֆինանսական ոլորտի տնտեսագիտական խնդիրների հետազոտության բաժին (ներառելու է նաև հարկային, վարկային, դրամաշրջանառության, ապահովագրության խնդիրները).

6. ՀՀ սոցիալական ոլորտի տնտեսագիտական խնդիրների հետազոտության բաժին (ներառելու է կրթության, առողջապահության, գիտության, սոցիալական ապահովվածության, բնակչության վերարտադրության, մարդկային կապիտալի զարգացման, վերարտադրության և օգտագործման խնդիրները).

7. ՀՀ արտաքին տնտեսական կապերի, տնտեսության մասնագիտացման և մրցունակության բարձրացման խնդիրների հետազոտության բաժին (ներառելու է նաև մաքսային գործի, արտաքին ներդրումների ներգրավման, գլոբալացման և ինտեգրման գործընթացների ազդեցության, գործընկեր երկրների ընտրության, ՀՀ համեմատական և բացարձակ

առավելությունների գնահատման, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության խնդիրները):

Վերոնշյալ բաժիններից յուրաքանչյուրի հետազոտությունում, անկախ դրա ուղղվածությունից և հետազոտվող օբյեկտից ու խնդրից, հավաստի տեղեկատվություն է ներկայացվելու հետևյալ հարցերի շուրջ.

- խնդրի էությունը, արտահայտման ձևը, ազդեցության արդյունավետությունն ու հետևանքները, հետազոտության նպատակահարմարությունը՝ ակնկալվելիք արդյունքների տեսանկյունից,

- խնդրի մշակվածության աստիճանը, այլոց կողմից նախկինում ստացված արդյունքների համեմատական վերլուծությունը, դիտարկվող պայմաններում դրանց կիրառման հնարավորության և նպատակահարմարության գնահատումը,

- խնդրի դրվածքի, լուծման մոտեցումների, ակնկալվելիք արդյունքների, հետազոտության գործընթացային և ժամանակային պլանային պատկերացումները, դրանց կատարման տեղեկատվական ապահովման հնարավորությունները:

Այս տեղեկատվությունը հնարավորություն կընձեռի ժամանակին հայտնաբերելու և գնահատելու պլանով նախատեսված գործընթացից շեղումների հնարավորությունը և դրա հիման վրա ձեռնարկելու դրանց ազդեցության մեղմացմանն ուղղված կառավարչական միջոցառումների մշակումն ու իրականացումը:

Թեմաների ընտրության, հետազոտության փուլավորման, աշխատանքների ժամանակացույցի և հաշվետվությունների ներկայացման կարգը. ինստիտուտի աշխատանքի պլան ներառվող թեմաների ընտրությունը, հասկանալի է, կատարվելու է դրանց գործնական-կիրառական կարևորության և առաջնայնության տեսակետից, ուստի նպատակահարմար է, որ դրանց առաջադրումը հիմնականում կատարեն մակրոտնտեսական կառավարման այն մարմինները, որոնք շահագրգիռ են նման հետազոտության արդյունքների կիրառման գործում: Ինստիտուտը կարող է նաև իր առաջարկությունները ներկայացնել կառավարող մարմնին՝ որպես խորհրդատվություն:

Ընդհանրական տեսական ուղղվածություն ունեցող թեմաների հետազոտությունը պլան ներառելու և կատարումը ֆինանսավորելու վերաբերյալ առաջարկությունները, որպես կանոն, արվելու են ինստիտուտի նախաձեռնությամբ՝ հաշվի առնելով խնդիրների կարևորությունը և լուծման առաջնահերթությունը տնտեսագիտությունում, ինչպես նաև ինստիտուտի առաքելությանը և մասնագիտացման ուղղություններին դրանց համապատասխանությունը: Առաջնությունը տրվելու է այն թեմաներին, որոնց արդյունքները ենթադրվում է կիրառել ինստիտուտի պլաններում՝ տվյալ ժամանակում կամ հետագայում ներառվելիք գիտագործնական ուղղվածության թեմաների հետազոտություններում:

Ինստիտուտի գիտական անձնակազմի մասնագիտական կարողությունները հնարավորինս արդյունավետ օգտագործելու նպատակադրումով օգտակար է համարվում ամբողջական անվանում ունեցող համալիր խոշոր թեմաների ներառումը ինստիտուտի թեմատիկ պլանում: Նկատի ունենք այնպիսի թեմաներ, որոնց հետազոտությունը շարունակ-

վելու է 3-5 տարիների ընթացքում, սակայն դրանք հնարավոր է տրոհել ինքնուրույնություն ունեցող այնպիսի բաղկացուցիչ մասերի, որոնցում հնարավոր է ստանալ գիտական հետաքրքրություն ներկայացնող և ինքնուրույնություն ունեցող նոր արդյունքներ: Թեմայի այսպիսի փուլավորումը և յուրաքանչյուր փուլում կատարված աշխատանքի մասին հաշվետվությունների ներկայացումը կբարձրացնեն հետազոտությունը կատարողների աշխատանքի արդյունավետությունը և արդյունքների համար պատասխանատվության զգացումը: Այն նաև կպահանջի թեմայի ընտրության, փուլավորման, կատարվելիք աշխատանքների բովանդակության, ցանկի, ժամանակացույցի և այլ բնութագրերի ավելի բարձր հիմնավորվածությամբ պլանավորում և դրանց մանրամասն ներկայացում թեմայի հետազոտությունը կատարելու իրավունք ստանալու հայտում: Իսկ տարեկան փուլի ինքնուրույնությունը, որն իր արտահայտությունն է գտնելու նաև տվյալ փուլի անվանումում, հնարավորություն կընձեռի պատվիրատուին թեմայի կատարման յուրաքանչյուր փուլի վերաբերյալ մանրամասն հաշվետվություն ստանալու կատարողից: Այդ տվյալների փորձաքննության և քննարկման արդյունքների հիման վրա, բացի կատարված աշխատանքների գնահատումից, կորոշվեն նաև լրացումներ և հավելյալ հետազոտություններ կատարելու անհրաժեշտությունը և թեմայի շարունակման նպատակահարմարությունը:

Թեմայի ամբողջական ավարտական հաշվետվությունը այս դեպքում թեմայի կատարման ամփոփ նկարագրի տեսք կունենա, դրանում կից կներառվեն նաև տարեկան հաշվետվությունները, որոնք դրանով իսկ ինքնուրույն նշանակություն կստանան, ձևական բնույթ չեն կրի: Թեմայի առանձին փուլերի կատարման ընթացքի ստուգումներն ու ստացված արդյունքների քննարկումները նպատակահարմար է անցկացնել տարվա մեջ՝ եռամսյակների կտրվածքով, այն բաժնում, որի թեմատիկ պլանում է նախատեսված տվյալ թեմայի կամ փուլի կատարումը, հնարավորության դեպքում՝ տնօրինության ներկայացուցչի մասնակցությամբ: Իսկ տարեկան (փուլի համար ավարտական), ինչպես նաև թեմայի ամբողջական ավարտական հաշվետվությունը քննարկելու, գնահատելու և ընդունելու է ինստիտուտի գիտական խորհուրդը, որից հետո միայն այն կներկայացվի պատվիրատուին:

О НАЗНАЧЕНИИ, НАПРАВЛЕНИЯХ ДЕЯТЕЛЬНОСТИ И ОРГАНИЗАЦИОННОЙ СТРУКТУРЕ ИНСТИТУТА ЭКОНОМИКИ НАН РА

ГЮРДЖЯН А. С.

Резюме

Основным назначением Института экономики НАН РА является оказание услуг органам государственного управления в методологическом и научно-методическом (технологическом) обеспечении их деятельности и экономическом обосновании применяемых ими управленческих решений. Главное направление исследовательской деятельности института, диктуемое его назначением, – это создание

методологического и методического обеспечения для выполнения функций органов макроэкономического управления с учетом особенностей республики. Основными функциями института являются выявление экономических проблем, стоящих перед республикой, выполнение научных исследований, направленных на создание указанного методологического и научно-практического обеспечения решений выявленных проблем, оказание консультационных услуг в области их применения. Немаловажными считаются функции подготовки и аттестации высококвалифицированных научных кадров, а также выполнение договорных работ по оказанию научной помощи другим организациям республики или участие в их разработках.